

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄԱՍԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կես տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում:

Օտարաբարդացիք դիմում են ուղղակի  
Тифлису, Редакция „Маска“.

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են առանձին լի գովով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
խաւարանիւր բառից մի կողմէ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարստահարողներ:—Ներքին տեսուչ-  
թիւն. Նուստու գաւառի շրջանայանութիւնը:  
Նամակ Զարթաթիւն. Նամակ խմբագրին: Ներ-  
քին լուրեր:—Արտաքին տեսուչիւն. Ֆը-  
րանսիա. Նամակ Գէորգիւնի:—Պառն-  
լուրեր:—Յայտարարութիւններ:—Տեղեկա-  
ցոյց:—Բանասիրական: Մի քանի մտքեր  
իզական սեռի դաստիարակութեան մասին, մաս-  
նաւորապէս Գերմանիայում:

## ՀԱՐՍՏԱՀԱՐՈՂՆԵՐ

Մենք շատ անգամ, մանաւանդ օտարների  
առաջև պարծնում ենք, որ հայերի մէջ ոչ  
առաջ կար և ոչ այժմ էլ կայ ստրկութիւն:  
Եթէ այս կարծիքի ճշդութիւնը հին ժամա-  
նակների համար վիստում է պատմութիւնը,  
կարող ենք արդեօք նորան և այժմեան ժա-  
մանակների համար իրողութիւն համարել:

Քչմարտ է, որ մենք այժմ այնպիսի  
ստրկների դաս չունենք, որը սկիականութիւն  
թիւն լինէին կառաւածատներին, որոնց այդ  
վերջինները իրաւունք ունենային ծախելու  
ուրիշ վերա, որոնք ազատ չը լինէին մինչև  
անգամ իրանց ընտանեկան գործերի մէջ, օրի-  
նակ ազատ չը լինէին պատկիւ առանց իրանց  
սեռի թոյլաւութեան: Բայց եթէ մեր ժա-  
մանակակից գիւղացին սեփականութիւն չէ  
կառաւածատներին, եթէ նա մարմնով ազատ է,  
կարող ենք արդեօք ասել, որ նա ստրուկ չէ:

Հայ գիւղացու այժմեան դրութիւնը հե-  
ռու է այն իգէլական անկախութիւնից, որի  
մէջ մենք պատրաստ ենք երևակայել նրան,  
հիմնականով պատմական մութ անցեալի վերա:  
Իրականութեան հետ ծանօթանալով, մենք կը  
տեսնենք, որ գիւղացու դրութիւնը հեռու է  
նորանանից լինելուց, թէ նրաթական թէ բա-  
րոյական կողմից. . . . Նա ստրուկ է, որովհետև  
հարստահարողը նրան աղքատացրել է, նա  
ստրուկ է, որովհետև նորա հոգեւոր ուսուցիչ-  
ները նորան աղիտութեան մէջ են պահում,  
նա ստրուկ է, որովհետև նա աղքատութիւ-  
նից և աղիտութիւնից անբարոյական է դար-  
ձել, նա ստրուկ է ուրեմն, որովհետև հարս-  
տահարութեմ է նրաթական և բարոյական:  
Նրաթական հարստահարութիւնը այն ամեն

անձերից, որոնք նորանից նրաթական առաւել  
ապահոված են, տեսնելով, որ նորա սեփական  
աղին աշխատանքը նորան հնար չէ տալիս  
իր կեանքը ոչ միայն բարեօրէն, այլ գոնեա  
ապահովելու, նա ակամայ համեմատում է իր  
դրութիւնը իրան հարստահարողի դրութեան  
հետ և հասնում է հետեւեալ բարոյական  
եղբակացութեանը. «միայն անաղին կերպով  
վարվողը կարող է հարստանալ, միայն նա,  
որ խղճատանք չունի և ուրիշներին հարստա-  
հարում է, նրանց գործիք է դարձնում իր  
շահատէր նպատակների, կարող է հանգիստ  
և յարմար կեանք վայելել»:

Այսպիսի եղբակացութեան հասածին ինչ  
բարոյական հիմունքներ կարող են արգելք դը-  
նել նոր ճշմարիտ ճանաչած սկզբին հետեւե-  
լու: Քրիստոնէական պատգանքները թէև զօ-  
րութիւն ունեն ժողովրդի վերա, բայց նա  
նրանց չէ կարող յիշել, երբ ստիպված է մտա-  
ծել իր օրական ապրուստի մասին: Եւ ինչ  
չը հեռանայ գիւղացին Քրիստոնէութիւնից ա-  
ւանդված պատգանքներից, երբ նա տեսնում է, որ  
իրան հարստահարողները վաղուց է որ կողմ են  
թողել դրանց և այնու ամենայնիւ յարգանք են  
վայելում նոյն իսկ հոգեւորականութիւնից, որ  
ժողովրդին բարոյական քարոզներ է կարդում  
ասելով «մի գողանա» կամ այլ սուր նման  
խօսքեր: Ինչո՞ք տգէտ ժողովուրդն էլ չը փորձի  
անաղին միջոցներով իր կեանքը բարեօրէն  
երբ տեսնում է, որ նորա շրջապատողները,  
ամենքը այս հնարներին ոչ միայն համա-  
կրում են, այլ և նոցա համեմատ վարվում են,  
թէև երբեմն ստիպված են նրանց պաշտօնա-  
պէս նախատել:

Ինչ բարոյական հաստատութիւն կարող է  
ունենալ գիւղացին, երբ նա տեսնում է որ  
կրօնքի տգէտ սպասաւորները երեսանց միայն  
ընդունում են կրօնքից պատգանքներ բարոյակա-  
նութիւնը, որ դրանց խօսքերի և դրժերի մէջ  
տիրապետում է մէկ անհաշտելի հակասու-  
թիւն, երբ մի և նոյն ժամանակ նրան այն-  
պիսի աղիտութեան մէջ են պահում (զուցե  
նրան առաւել յարմար հարստահարելու նպա-  
տակով) որ նա ընդունակ չէ ըմբռնել որ կա-

րող է հոգալ իր օգուտի մասին առանց ուրիշին  
վնասելու: Իսկ վերջը պատահում է, որ սե-  
փական օգուտը երկրորդական տեղն է բռն-  
նում և գլխաւորը դառնում է ուրիշին վնա-  
սելը: Գիւղացին նախանձից շարժված իր  
հարեանի տունն է այրում, կամ ջրանցք է  
աւերակ դարձնում և մտիթարվում է որ, եթէ  
նա ինքն չը կարողացաւ իր ունեցածը պահ-  
պանել, գոնեա իր հետ միասին փչացան և  
նրա հարեանները:

Մէկ մատչելի կը նա միշտ ունի—աւա-  
զակ դառնալու: Իսկ եթէ նա կարողացել է  
իր գործերը յաջող տանելու, այսինքն ուրիշ-  
ներին վնասեց, ինքն դորանից օգտվելով, նա  
բոլորովին հանգիստ է, որովհետև գիտէ, թէ  
փողը ամենազօրեղ միջոց է և նորա օգնու-  
թիւնը նա կարող է վկանել առնել, որոնք  
պատահած ժամանակ նորա անմեղութիւնը կը  
հաստատեն:

Ուրեմն մեր ունեւոր հարստահարողները  
այժմ արդէն հասան այն անհրեքելի հե-  
տեանքին, որ անբարոյականացրին ազատ ժո-  
ղովուրդը նախ և առաջ նորան աղքատու-  
թեան դուռը հասցնելով, հասցրին ժողովուրդը  
այն դրութեանը, որ երկու մարդ չը մնաց,  
որոնք իրար վերա առանց կասկածի նայէին:

Բայց մի մոռանաք, հարստահարողներ, որ  
մի ժամանակ կը գայ երբ դուք մի այնպիսի  
Վատաստանի առաջ կը հանդիսանաք, ու-  
րեք է հաշիւ տաք այն բոլոր զիջումների  
և անիրաւութիւնների համար, որ դուք խա-  
ղացիք ժողովրդի և ձեր նմանների զինքն:

Ա. Արծրունի

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆՈՒԹՈՒ ԳԱՒԱՌՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Նուստու գաւառը Ղուբայի, Վարանդի  
և Բաղուայ գաւառների պէս նմանապէս իր  
մասնաւոր պարտաւորութեան, իր մասնաւոր ար-  
գիւնարութիւն ունի, որ գրեթէ ամբողջ  
աղգարանութեան ուշադրութիւնն է դրա-

ւում—դա շերամապահութիւնն է: Ինչպէս  
յիշեցի անցեալ նամակումս Վարստանի կամ  
մեծ կովկասեան շրթայի բոլոր հարաւային  
զաւիվայրը թիւնիների մի անընդհատ այգի է  
նրկայացնում: Ամեն գիւղում, ամեն տան մէջ  
գրեթէ կարելի է նկատել մէկ մարդուն, որ բո-  
ժոժից թէև է բաշում: Աւելորդ է ասել, որ  
գործածական մեքենաներ և ձկեր ի հարկէ  
շատ սկզբնական են, որ շատ ժամանակ, շատ  
ոյժ, շատ նիւթ իզուր են կորչում, որ թիւը  
շատ անհաւասար է և զանազան տեսակների  
չէ բաժանած:

Բայց քնական այս հարստութիւնը վա-  
ղուց է արդէն (մօտ 15 տարի է) որ գրաւել է  
դէպի Նուստու գաւառը օտար գումարաւոր-  
ներին և վաճառականներին: Ընթերցողներից  
զուցե ամենքը կը յիշեն որ 15 տարի սորա-  
նից առաջ մի խումբ Ֆրանսիացիների և ի-  
տալացիների կիկ էին Նուստի շերամի սերմը  
(ձուանկը) առնելու, դրաւք այն հիւանդու-  
թիւնից, որին ենթարկվեցան արեւմտեան եր-  
կրների շերամի բոլոր տեսակները: Եւ քանի  
սերմերը երկար ժամանակ դէպի Նուստու վա-  
ճառահաններուց յետոյ է տեսնելով, որ և բերած  
կովկասեան սերմից դուրս եկող շերամը հիւան-  
դութեան է ենթարկվում, նրանցից մի քանիս-  
նիրը յարաբերութիւններ սկսան Ղինաստանի  
և Պապոնիայի հետ, իսկ միւսները այս ճանա-  
պարհ էլ ընտրելով մի և նոյն ժամանակ Ղով-  
կասին հաւատարիմ մնացին, թէև գիտէին, որ  
Ղովկասի բոժոժը իր որպիսութեան կողմից  
շատ ստոր է յիշած երկրների տեսակներից:

Մանաւանդ հաստատ հիւք դրեց Նուստու  
մէջ պ. Գանիի Ֆրանսիական աւաւարական  
տունը, որ վաղեց ասա մի քանի տարի է  
փոխանակ սերմը բոժոժը վաճառահանել դէպի  
Ֆրանսիա և թիւ քաշի շորանից իր գործա-  
րանքները, որոնք գտնվում են Ղիօնի գա-  
ւառում: Նրանցից առաջ շատերը այն կար-  
ծիքն էին, որ բոժոժի մէջ գտնվող շերամը  
միայն պէտք է խնդրել և առանց բոժոժը  
սկզբնու (պոչստի տակ դնելու) վաճառահա-  
նել, հաստատելով որ թիւը պոչստից վնաս-  
վում է, բայց նոքա այս վերջին կարծիքը վե-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ՄՏԳԻՐ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԱՍՏԻԱ-  
ԲԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, ՄԱՍՆԱԻՐԱՊԵՍ ԳԵՐ-  
ՄԱՆԻԱՅՈՒՄ

Կանանց հարցը արդէն շատ տարբեր է ի վեր  
օրուայ ամենապառ հարցերից մէկն է և եթէ նա  
քաղաքական կամ կրօնական հարցերի զօրու-  
թեամբ երբեմն երկրորդական նշանակութիւն է  
ստանում, այնու ամենայնիւ նա կրկին երևում է  
մտաւորական հորիզոնի վերա: Եւ այդ քնական  
է, որովհետև ներկայի հասարակական պայման-  
ները, որոնք երկասարգների մէջ պատկիւն-  
ցանկութիւնը աւելի և աւելի նուազեցնում են և  
տարից տարի աւելի մեծ բաղմունքիւ օրիորդների  
ստիպում են հաշտվել այն գաղափարի հետ, որ  
նրանք պէտք է իրանց ամբողջ կեանքը անցնեն  
առանց մարդու պաշտպանութեան—այս պայման-  
ները իրաւացի են դարձնում կանանց սեռի ձգ-  
տումն զէպի անկախութիւն կամ զէպի այն մի-  
ջոցները, որոնք նրանց կը հասցնեն այս նպատա-  
կին: Ճշմարիտ է այս ձգտումն չը պէտք է մինչև  
հակահանցիտութիւն ալլաւերել, որ կինը մոռա-  
նայ իր բնութիւնից ստացած դրութիւնը և ներքին  
բոլոր երկոյթների մէջ իրան աղամարդի հաւա-  
սարացնել: Իմանդ որ այսպիսի ձգտումները պա-

տահեն, մենք պէտք է մեր բոլոր ոյժը դորա դէմ  
գործ դնենք, յիշելով ներկայի ամենատաղանդա-  
ւոր կրթութեան պատմաբանների միջին խօսքերը,  
որ պատմական ապացոյցներով ապացուցանում է  
թէ կանանց խմբովին ձգտելը դէպի հասարակա-  
կան կեանքը միշտ նշան է դարի հիւանդոտ դար-  
ստութեան:

Կանանց սեռի կրթութիւնը այնքան քիչ հետե-  
ւում է մէկ օրու կանոնի, որ նա ամեն երկրում  
և զրեթէ նոյն երկրի ամեն դասում այլ է: Մինչև  
անգամ վերվերայ մի հայացք օրինակ կրթված  
գաւառի աղջիկների կրթութեան վերա Գերմա-  
նիայում և միւս կողմից Բուսիայում, բոլորովին  
հաստատում է մի ասածը: Բայց դարձեալ կըր-  
թութեան այն ձևը պէտք է համարվել ամենա-  
լաւ, որ տարբեր պայմանների մէջ աննշան փո-  
փոխութիւններով գործ դրած լինելով հաջող էր  
լաւ հետևանքին:

Գերմանացիներ վաղուց է արդէն, որ լաւ անուն  
են վայելում մանկավարժութեան մէջ: Վերջին ինչ  
պէս են կրթվում այնտեղ բարձր դասերին պատ-  
կանող աղջիկները: Այս նպատակով են ընթեր-  
ցողներին խնդրում, որ ինչ հետեւին զէպի մէկ  
մուգեւումի պարտէզ (որ համապատասխանում է  
օրինակ Թիֆլիսի Կրթօժիկին): Մէկ գեղեցիկ  
արևափայլ օր քաղաքի գեղեցիկ հատարել է  
այնտեղ երաժշտութեան և պարի, այնտեղ նըս-  
տած են նոքա, զուարթ ինչպէս վարդեր, իրանց  
խնամապար մայրերի հովանաւորված: Նոքա խօ-  
սում են քաղաքի ամեն տեսակ նորութիւնների

վերա, նոր մօզաների վերա և այլն—ինչ և ինչ խօ-  
սակցութիւնը առանձին խելացի չէ: Այն կողմ  
մէկ սեղանի վերա նստած են մի քանի քոյրեր,  
մեր մօտիկ ծանօթներ—մենք նստում ենք նրանց  
մօտ: Նրանք ձերին ծխախոտներ չունեն բռնած,  
ինչպէս որ այլ տեղերում շատ յաճախ պատա-  
հում է տեսնել, այլ մէկ ձեռագործութիւն և դորա-  
նով շատ աշխատասիրութեամբ զբաղած են: Եթէ  
ուշադրութեամբ նայէք այս օրիորդների ձեռքերին,  
կը տեսնէք որ նրանք աշխատանքի սովոր են:  
Մատերը խոցոված են անհղիւտով, աշխատա-  
նք պարագլուխից կարգաւորանի մօտ ակներ  
հետքեր են կրում: Քոյրերից մէկը մինչև անգամ  
այրվելուց մէկ մեծ վէրք ունի, միւսի ձեռքը խոր  
կտրած է—այս վերքերը նրանք ստացան պարա-  
պելով խաճանոցի մէջ և անայնի աշխատանքնե-  
րից: Քոյրերից երրորդը արդէն տուն է դնացել  
ընթերցել պատրաստելու, նա «օրապարհ» է այսօր:  
Մենք մասնակցում ենք միացածների խօսակցու-  
թեանը և թէև գտնում ենք նրանց մօտ բաւական  
համեստ գիտութիւն, բայց մէկ առողջ և ճիշդ դա-  
տողութիւն այն բոլոր հարցերի վերաբերութեամբ,  
որոնք հեռու չեն օրիորդների հասկացողութեան  
հորիզոնից: Շատ շուտ կարելի է նկատել, որ նը-  
րանք շատ չը գիտեն, բայց զիտեցած հինմաւոր  
գիտեն և կատարելապէս մշակել են:

Հետեւեց այսպիսի օրիորդի դաստիարակու-  
թեան ընթացքին: Սովորաբար նա ուսումնաբան  
գնում է մինչև 14 կամ 15 տարեկան հասակը:  
Աւարկաները, որոնք աւանդվում են աղջիկներանց

ուսումնարանում (Töchter Schule—գումարերի ու-  
սումնարան) են գերմանական լեզու և գրակա-  
նութիւն, Թուրքականութիւն, քնական պատմութիւն,  
ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն,  
կրօն, ֆրանսիական լեզու, երգեցողութիւն, նը-  
կարչութիւն և ձեռագործութիւն: Մեծ մասով այս  
սխաւորութեան մէջ շատ աննշան հետեւանքն  
են հասնում և հասարակ ժողովրդական ուսում-  
նարանը, որի մէջ նոյն ասարականք են առանդ-  
վում, կարող է արանց հետ հեշտութեամբ մրցել:  
14 տարեկան հասակից սկսած մի քանի դասեր  
չարունակվում են, մանաւանդ նոր լեզուներ, երա-  
ժշտութիւն և այլն: Բայց այս հասակից սկսած  
աղջիկների զլխաւոր գործունէութիւնը տանն է և  
տնային տնտեսութեան մէջ, նրանք դառնում են  
տան տիկնոջ օգնականներ: Նրանք նոր են սովոր-  
ում տնային տնտեսութեան գաղթները և աշխա-  
տում են խաճանոցի և պարտեզի մէջ, կարտսե-  
ղանի և ողորկատախտակի (доска для утюжния)  
մօտ, իսկ երբեմն էլ լուածքի տաշտի մօտ:  
Շատ ընտանիքներում օրիորդները ստիպուած են  
մինչև անգամ մէկ պանդոկի խաճանոցի մէջ ա-  
շակերտութիւն անել: Լաւ տանտիկնոջից պա-  
հանջվում է, որ նա նախ և առաջ լաւ խօսարար  
լինի: Շատ սակաւներին վիճակված է 14 տա-  
րական հասակից յետոյ շարունակել մէկ կանո-  
նաւոր ուսում: Նոցա թիւը, որոնք մէկ կօշակը-  
վատօրիւմը մէջ կամ մէկ այլ բարձր ուսում-  
նարանի մէջ են պարագլուծ շատ չնչին է: Այն-  
պէս որ իսկապէս աղջիկների մտաւորական հո-



լուստուղիներ համար փորձ արին և հաստա- տեցին, որ բոժոժը բոլորովին չէ վնասուում պուշիսից, և այս պատճառով այդ ձեռք ըն- դուհեցին, որ նրանց համար այն կողմից էլ օգտակար էր, որ թռչնները աւելի ծանր դառ- նալով աւելի փոքր ծաւալ ունէին և ուրիշն աւելի յարմար էին վաճառահանութեան հա- մար:—Պ. Վանի հիմնից Նուխու մէջ երկու թէ երեք տարուց առաջ մի փոքրիկ գործա- րան, որ միայն նպատակ ունի բոժոժի շրմար խնդրելու և յետոյ բոժոժները սեղծելու: Այս նպատակով նրանք ընտրած, կամ անասնորի բաժանած բոժոժը դարձում են ցածր արիւ- ղիւրի մէջ, որոնց յատակը կտաւից է շինած և որոնք դարձում են երկաթի ռէլսերի վերա հնոցների մէջ մացուող կառքերում: Հնոցների մէջ ջերմութիւնը հասնում է 60—80° Յէլ- զիուսի, որ բոլորովին բաւական է շրմար խնդրելու համար: Հնոցների մէջ տաք օդ լինելով և ոչ գոլորշիներ, ինչպէս ուրիշների մօտ, շրմար խնդրելուց յետոյ բոժոժի չա- րացնելը աւելորդ է դառնում:

Այս գործարանի մէջ չափազանց շատ մը- շակներ են զբաղած, որովհետեւ գործարանի գործունէութիւնը շատ կարճ է՝ տարւոյն շատ շատ երկու ամիսների միջոցուր պէտք է պատրաստ լինի և ուղարկվի Ֆրանսիա: Յի- շիտ արժանի է, որ Ֆրանսիացիներ առաջին- ներն էին, որոնք կարողացան կտարի մի նա- խապաշարունք՝ այն է որ կանայք երեւոյին տղայ մարդկերանց առջև: Այնքան դարձա- նալի չէ, որ թուրք կանայք համաձայնե- ցան աշխատել, որքան հայ կանայք, որոնց սովորութիւնը մինչև անգամ արդելում է օտար մարդու հարցումներին պատասխան տալ: Այս պատճառով են շատ դարձապէս իմանա- լով որ պ. Վանի գործարանի մէջ աշխա- տում են մօտ 400 կանայք, որոնցից մեծ մասը հայեր են: Աւելորդ է ասել, որ նրանց յաճա- նած է միայն թիթեւ աշխատանք, այն է բո- ժոժը անասնորի բաժանել:

Խաղաղներից և Ֆրանսիացիներից յետոյ Նուխու գաւառի շրմարահանութեան վերա ուղարկութիւն դարձրեց և մի ռուս ընկե- ութիւն Ալեքսեյ և Ս. օրօնի, հիմնելով Նուխի քաղաքում 1863 թվին թիւ քաշե- լու մի գործարան: Արդէն երկու տարուց յե- տոյ այս գործարանը մեծ մասով մէկ հրդեհի զոհ դարձաւ և մնաց այս աւերված դրու- թեան մէջ մինչև 1872 թիւ, երբ նորան առաւ պ. Միրզոյի:

Գործարանը 1872 և 1873 բանիւղուց յե- տոյ, այս տարի պէտք է նորոգվէր, այս պատ- ճառով ինձ չը յաջողցաւ տեսնել նրան գոր-

ծողութեան մէջ: Ինչպէս յիշեցի գործարանի նպատակն է բոժոժից թիւ քաշելու: Այս նպատակով բոժոժը առաջ ենթարկվում է մի առանձին սննդի մէջ գոլորշիների ազդեցու- թեանը և շրմարի խնդրելուց յետոյ կամ խոնավ գործ է անվում թիւ քաշողներից, կամ առաջ չորացնում է: Բոժոժը տալիս է զա- նազան տեսակի մետաքս և զանազան քանա- կութիւններ: Ամեն 5—7 պուլ բոժոժից ստաց- վում է մէկ պուլ թիւ: Մետաքսի առաջին տեսակը, որի պուլի զինք առաջ հասնում էր մինչև 500 թուրք, այժմ արժէ 400 թուրք: Մետաքս տեսակները համեմատաբար աւելի արժան են: Ամենատարին տեսակը, որ ստաց- վում է բոժոժի մնացորդներից և երկրորդի բոժոժներից, պուլը մինչև 60 թուրք է ծախ- վում և աւելում է զխաւորապէս Պ. Պօլի մէջ մետաքսայ հաստ հիւսվածքների համար: Այս գործարանում էլ, ինչպէս և Ֆրան- սիացիների մօտ մշակների թուրք կան և կանայք:

Սակայն չը կայ, որ եթէ այդպիսի գոր- ծարանի համար չը խնայէին միջոցներ, որ զբաղողապէս մեր հարուստների սովորու- թիւնն է, նա կարող էր դառնալ մի կենդու- նական գործարան շրմարահանութիւնով պա- րագող մեր գաւառների համար: Եւ աւելի ժամանակակից գործարանական ձեւեր գոր- ծածելով, մի կողմից կ'աղատէր ամեն մէկ մաս- նաւորին թիւ քաշելու պարագիւրուց, այլ նա- ին կը ձգէր դէպի գործարանը և, նրան ա- լելի հաստատ ունիլ տալով, կ'աղատէր նը- լան աւելի քան նա կարող էր սպասել իր միայնակ սեփական ոյժերից: Միւս կողմից պայտի մի գործարան կը բարեբեւ մետաքսի տեսակները, որ անհարկն է իւրաքանչիւր մասնաւոր մարդու, երբ նա սովորած է այն նիւթը գործածել, ինչ որ կայ նրա ձեռքերին և որ համեմատաբար այնքան փոքր է քանա- կութիւնը, որ զրիթէ չարժէ զանազան տե- սակների բաժանած լինելու:

Բայց մինչև որ մեր հարուստները կը հաս- կանան, որ կարող են բարձրացնել տեղական արդիւնաբերութիւնը ոչ միայն իրանք չը վը- նասելով, այլ և շահվելով, մինչև որ կը հաս- կանան, որ նեղելով մշակին և գործակաւորին նորա իրանց սեփական գումարները մեռցը- նում են, մինչև որ կը հասկանան, որ կ'ազեկ- ներ հաշվելով նորա կարող են միայն վնասել գործի յաջողութեանը և ուրիշն իրանց սե- փական գումարներին, օտար գումարատէրիքը իրանց գործը կը շարունակեն, և աւելի գնա- հատելով ամեն մէկ անհատի աշխատանքը,

աւելի համապատասխան վարձատրելով նրան, կը ստանան ժողովրդի համակրութիւնը և ժողովուրդը կը ծառայի նրանց համար:

Նուխի

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ԶԱՔԱՄԱՆԻՑ

Զաքաթալի վիճակը մտնելով ճանապարհորդը իսկոյն նկատում է, որ գտնվում է մէկ աւելի բարե- կարգած երկրում, քան ինչպէս տալիս նախազե- Այս վերջինի մէջ ճանապարհորդելով անդադար լուծի են գտնվածները, որ աւաղակներ հաշտ և խաղաղ ընտել ջանկարչներին կհանգը անապա- հով են անում, նրանց կայքը վտանգի մէջ են դը- ցում, յուսահատեցնում են: Զաքաթալի վիճակը արդէն իր արտաքին տպագրութիւնով վտանգու- թեան և ապահովութեան զգացմունք է ծնեցնում ճանապարհորդի մէջ, Բայց ինչ են այն արտա- քին տպագրութիւնները, որոնք ստիպում են ճա- նապարհորդին անվտանգ լինելու իսկ այն տեղե- րում, որոնք գիւտ նորիցմայն այնքան անհաշտելի էին, որ բնակիչները ամենապիւր գոգոսութեան համար համաձայնութեամբ, ինչպէս մէկ մարդ և մէկ կամք, վեր էին կենում, ապստամբվում էին:

Այժմ ամեն մի երեսից արտափայլում է բա- ւակաւութիւն, ոչ մի մարդուց չէ լսել զանգատ կամ գոգոսութեան մի խօսք: Մարդկերանց հետ էլ չը խօսելով կը հասնէք նոյն եղբայրացու- թեանը, տեսնելով ամբողջ վիճակի մէջ չօսելներ (այդ ոչ միայն փոստի ճանապարհորդի վերա է, այլ և ամեն դեղից դէպի մի ուրիշ դեղ), որոնք կա- ռուցվել են բնակիչների ջանքերով և նրանց սե- փական միջոցներով: Փոստի ուղին աւելի մէկ ծառայողացին է նմանում, որի երկու կողմ տըն- կած են ընկուղիները: Այս բոլորը նոր է, բայց չըտուի, մի քանի տարուց յետոյ ճանապարհները, որոնք տարից տարի նորոգվում են, մէկ պարկին կը նմանեն:— Ամեն քաղաքներում ճանապար- հորդի աչքին դիպում են երկրի բարօրութեան ապացոյցներ, մէկ տեղ կը տեսնէ գիւղական ճա- նապարհի վերա մէկ քարաշէն կամուրջ, մի ու- ըրէ տեղ մի թիւում, որ պատաշարում է մի գիւղ (Մուխաթ) յեղեղներից, մէկ էլ տեղ (Զաքաթալ) մէկ ֆերմա, ուրտեղ անկված են զանազան մըր- զածաների այլ և այլ տեսակներ, որոնք ժամա- նակով պէտք է տարածվին ամբողջ վիճակի մէջ: Բայց թիւ է այստեղիւր պատամբող և պատե- րազմանը ժողովուրդը դարձել հաշտ և գոր- ծունեայ—այս հրաշքը գործի է տեղական կա- ռուցութեանը, պատիւ և սէր ժողովրդի կող- մից յարգանք, պատիւ և սէր ժողովրդի իր զօ- րեղ բայց արդարացի վարմունքով: Պ. Զօլօվի- կովը, Զաքաթալի վիճակի կառավարիչը ոչ միայն, ինքն շատ շարժուն և գործունեայ մարդ լինելով, կարողացել է զրաւել դէպի իրան բոլոր ժողովրդի համակրութիւնը, այլ և իմացել է իրան չըբապա- տել այնպիսի մարդիկներով, որոնք նպատակ են նորա ցանկութիւններ իրազորմանը:

Ընդհանուր տպաւորութիւնները թողնելով, դառ- նաւ երկրի արդիւնաբերութեան և ժողովրդին:

Երկրի Զաքաթալի վիճակումը ճանապարհ է, կա- րող է ամենապարզաբերելից մէկը համարել: Ան- զբովիկանութեւն, Բուսակաւութեւնը այնքան ճոխ է և բոլորը այնքան արագ է բուսում, որ կարծես թէ աչքի համար նկատելի է: Անզբովիկանութեւն շատ տեղեր կան, որտեղ հողը շատ առատ է, բայց իսկ այս պատճառով ժողովուրդը ծայլ է, իսկ Զաքաթալի լէզզիները ամեն թէ աւելի զրգած են աշխատանքի լինելու, որովհետեւ դուր ճօխ հե- տանքը և արդիւնքն են տեսնում: Այստեղ էլ ինչպէս Նուխու գաւառի տափարակի վերա շատ տեղեր զրաղվում են շրմարահանութեամբ մանա- ւանդ Նուխու գաւառի սահմանից սկսած մինչև կախը և այդտեղից դէպի հարաւ: Գուցէ այս ար- դիւնաբերութեան կենտրոնը կը դառնայ (եթէ միայն իր դերը կը հասկանայ) պ. Մախարովի թիւ քաղաքը գործարանը Զաքաթալ քաղաքում: Բայց շրմարահանութիւնը չէ որ ամենամեծ վաճառա- հանութեան արդիւնք է տալիս Զաքաթալի վի- ճակումը:— Գլխաւոր արդիւնահանութեան առաւը- կանները ընկողը և տիւնի են, որոնք, եթէ չեն սը- խաղվում, տարեկան մօտ 300,000 թուրքով են ծախվում գուրու:

Նոր ժամանակներում առաջուց էլ յաջող բայց նախապետական ձեւեր գործածող երկրագործու- թիւնը մի նոր դարձ տեսքաւ կրկին պ. Զօլօվ- ինիկովի արթուն ջանքերով, Նա իր համար նպա- տակ դրեց բարելաւացնել երկրագործական ձե- ւերը, ինչպէս ժամանակը և ապարդիւն ոյժերը, որոնք իրար ջրվելով առաւել քիչ արդիւնք էին բերում քան թէ կարող էին: Այս տեղերի բնա- կէշները իրանց հողը վարելու ժամանակ այնքան ծանր արտաքին էին գործածում, որ եղիների կամ գոմէշների մինչև 8, երբեմն էլ 16 լուծ են հար- կաւոր: Պ. Զօլօվիկովը մայրից մի քանի տե- ղերում նոր թիւնի արտաքին, որոնք գործածելու մի լուծ բաւական է, Առաջ լեզզիները կառ- կածով էին նայում այս գործիչների վերա կար- ծելով որ նրանք մի րոպէ չեն դիմանալ, բայց հա- կուտակի մէջ համոզվելով մինչև անգամ ուրա- խութեամբ ընդունեցին պ. Զօլօվիկովի առա- ջարկութիւնը այս նոր մայրած արտաքին օրի- նալով իրանց մօտ ձեւել ուրիշներ, Նա նշանա- կեց մի որոշ վարձատրութիւն նրանց համար, որոնք կը հաջողի նոր ձեւի արտաքին պատրաստել և կար- ծեմ որ երեք դարբիններ տարած նրանց որոշած վարձը և բացի սորանից Նուխի կայսերական Բարձրութիւնը, կովկասի փոխարքան Զաքաթալի վիճակումը ճանապարհորդելով այս գործիչներին իր համակրութիւնը ցոյց տալու համար վարձա- տրեց նրանց, մեղաւոր չնորսելով:

Ես բոլորովին համոզված եմ, որ քաղաքներու- թիւնը որ այնպէս համակրութեամբ է կառար- վում շատ կը նպաստէ ժողովրդի էլ աւելի գոր- ծունեայ դառնալուն:

Ինչ որ ժողովրդի է վերաբերում, Զաքաթալի վիճակումը նա կազմված է լեզզիների երկու ցե- դրից, որոնք տարբեր լեզուներով են խօսում: Ոչ մէկի լեզուն նման չէ նորան որ գործ է անվում Ախտիւմ (Սամուրի վիճակի կառավարութեան կենտրոն) և Ղուրայի գաւառի բարձրութիւնների վերա: Մէկը նրանցից, որ խօսում է ձառ անուա-

ցիքները բաւական նեղ և սահմանափակված է, որովհետեւ նրանք հազիւ թէ աղատ ժամանակ էլ ունեն լաւ զրքեր կարողանան: Հիմարիտ է, որ նոր անդրութիւնը բոլորովին տարբեր է և արդէն լըս- վում են մարդերի կողմից գտնվածներ, որ նրանց աղջիկները չափազանց շատ են պարագում երա- ժշտութեամբ, լեզուներով և այլ առարկաներով և որ այն պատճառով տնային աշխատանքը սաս- տիլ փաս է կրում: Եւ աղամարդերի մեծ բազ- մութեանն էլ իրենցական երեւում է այն կինը, որին Շիլլեր իր «Glocke» (Գլոքե) բանաստեղ- ծութեան մէջ նկարագրեց: Քրիտիկներին այսպիսի իրենցական տանտիկները դարձնելու համար աշ- խատում է գերմանական դատարարակութիւնը թէ ուսումնասիրել, թէ տան մէջ:

Հետաքրքիր է դուր հետ համեմատել Բուսիայի մէջ աղջիկներին տուած դատարարակութիւնը: Առանց մանրամասնութիւնների վերա ուղարկու- թիւն դարձնելու, մենք պէտք է իսկոյն սկզբից ասենք, որ Բուսիայի մէջ կնոջ կրթութեան հա- մար անհամեմատ աւելի են գործում, քան թէ Գերմանիայում, որ ընդամենը այն կրթական մի- ջոցները, որոնք հասանելի են ռուս աղջկան, շատ աւելի բազմութիւն են, որ առ հասարակ դատարա- րակութիւնը շարունակվում է մինչև 17 կամ 18 տարեկան հասակը, կամ այլ աւելի: Այ միայն նոր լեզուների վերաբերութեամբ աւելի հոգեւ են տանում քան թէ մեզանում, այլ և ուրիշ առար- կաների վերաբերութեամբ, և մասնաւոր շատ ակն- երեւ մասնաւորապէս և բնական գիտութիւնների

մէջ: Ինչ ծուռ ճանապարհների վերա երբեմն ընկնում են ռուս կանայք, որոնք ուղում են իրանց ուսումը շարունակել, այդ յայտնի է ամենքին և ամեն մէկ խելացի մարդ հեռանում է այսպիսի վերաձեւութիւններից, որոնք մեծ մասով պակաս է և հիմնաւոր ուսում:

Բայց անհեղինակ է միայն այն, որ աւելի բարձր ուսումնասիրական կրթութեան պատճառով, լաւ ուղղութիւն ստացած ռուս կանայք շատ աւելի հետաքրքրութիւն ցոյց են տալիս դէպի գիտնա- կան հարցեր, որ նրանք շատ աւելի ձգտում են զգուշ շարունակել պարագիւրու և յարմար գրքեր կարգաւոր իրանց իմացածի չըբան հարստացնել: Այս պատճառով մէկ օտար մտնելով ռուս սա- լոնի մէջ ուրախ տպաւորութիւն է ստանում, երբ տեսնում է որ կանայք մեծ բազմութիւնը հե- տաքրքրութեամբ մասնակցում է գիտական խօ- սակցութիւնների, մինչդեռ գերմանական կանայք համար այսպիսի խօսակցութիւնները շատ անգամ չարկազանց ծանձրալի են երևում: Հիմարիտ է, որ և ռուս կանայք պակաս է մէկ հիմնաւոր գի- տութիւն, սակայն մէկ սաղօնական աղատ խօ- սակցութեան համար հարկաւոր չէ մի հարց հիմ- նաւորապէս քննելու: Վերջիվերջ կերպով գիտնա- կան հարցեր չըբանել էլ այսպիսի դէպքերում լիովին բաւական է:

Իսկ որքան են հասակում այսպէս կրթված կանայք տնային տնտեսութիւնը—սորա մասին պէտք էր հարցնել ամուսնացած տղայ-մարդերից, սրանցից մեծ մասը հազիւ թէ մեր անհամաս

այս հարցին շատ ուրախ և գոհ երևալով կը պա- տասխանեն:

Հիմարիտ է, որ այստեղի պայմաններում, ուր ամեն անային անտեսութեան, մինչև անգամ ա- մենապարզ և ամենահասարակի մէջ մէկ խո- հարար կայ, որ շատ աւելի շուտ և աւելի պա- կաս խնայողութեամբ են վարվում, քան թէ Գեր- մանիայում, տանտիկնոջ մասնակցութիւնը այնքան անհրաժեշտ չէ և մինչև անգամ այն տանտիկնոջ մէջ ինչպէս այդ լինում է Գերմանիայում, գուցէ այն- տեղ անկարգութեան կը լինէր: Բայց այնու ամե- նային կարելի էր և այստեղի պայմանների մէջ տանտիկնոջից իրաւունքով պահանջել, որ նա իւր- հարարին և առհասարակ տուն մէջ կատարվող աշխատանքը վերադրուէր: Սակայն պարագիւրու այս պահանջը կատարելու շատ սակաւներ են ընդունալ:

Եթէ ցանկանայիք կանայց դատարարակու- թեան տարբերութիւնը Գերմանիայում և Բու- սիայում ձեւակերպել, գուցէ կարող էինք ամբող- փելով ասել, Գերմանիայում աղջիկները չափազանց միակողմանի տնային կեանքի համար են պատ- րաստվում, Բուսիայումը չափազանց շատ սաղնի և հասարակական համար: Կասկած չը կայ, որ ամուսնիների մեծ մասը, մասնաւոր նորա, որոնք մեծ նիւթական միջոցներ չունեն, աւելի օգնու- թիւն են ստանում առաջնիւններից, քան թէ վեր- ջիւններից: Գիտութիւնով քիչ հետաքրքրվել այն- պիսի մի պակասութիւն է, որ կարելի է հետաու- թեանը հեռացնել, որովհետեւ այն ձգտման պատ-

ճառով, որ մի օրիորդ ցոյց է տալիս դէպի մի երիտասարդի անձնատրուութիւնը, գարնանում է ինչն իրանց հետաքրքրութիւն դէպի դուրա պա- րագիւրուց, դէպի այն առարկաները, որոնցով զրաղված է դուրա միտքը: Իսկ եթէ կինը անա- յին անտեսութեան մէջ բան չէ հասկանում, նո- րան դուրս կը լինի դուրան լրացնելու:

Ասկայն և այն դէպքերում, երբ մէկ կին դու- նական թոր հասկացողութիւն ունի, նրան աւե- լի է պատշաճ իր դիտեցածի հետ համեմատ վա- րելու:—Այսպիսի կրթութիւնը նրան միայն հա- ջիւր րազմարութիւնների ժամանակ կարող է և նպատակ դառնալ, միայն առանձին հանգամանք- ներում նա նորանից իր արհեստը պէտք է չինէ: Բայց անուսումնային այսպիսի կնոջ մարդը ըն- տանիւր և բոլոր չըբապատողները միջապէս կօգ- տրվին նրա տգիւն կրթված կանայքութիւնից:

Այս մտքերից յետոյ միջակամայ ցանկութիւնն է գալիս կնոջ մէկ ընդհանուր իրենց ներկայու- չեց, որովհետեւ գերմանական իրենց ամեն կող- մից չէ բաւականացուցիչ: Եթէ բնութիւնից կնոջ նշանակված է մայր դառնալու և ընտանիքին ուղղութիւն տալու, այն ժամանակ ամենալաւ մայր նա կը լինի, որ բացի տունը կառավարե- լուց այնքան դիտութիւն էլ ունի, որ հարկաւոր ժամանակին ինքն էլ իր երեխաներին դատ տալ կարողանայ, կամ ուր որ պահարկաւոր չէ, գոնեա նրանց վերադրելով իրանց մտաւոր պարագիւրուց ժամանակ և զարգացած մարդկերանց հասարա- կութեան մէջ մէկ խելացի խօսք ասել իմանայ:



նաճ գիւղի մէջ, որ գրեթէ կաթն է Զարաթաշ  
քաղաքին, և նոյն ձորով տեղաւորած այլ գիւղերի  
մէջ իսկ միւս կողմից տարածուած է մինչև Ալա-  
զան գետը, փոքր ի չափ նմանութիւն ունի Ա-  
վարների լեռնին հետ, թէև նրանք իրար չեն հաս-  
կանում, զուգե՛ որովհետև այս երկու բարձրա-  
նեքը վաղուց է որ բաժանուի են իրարուց։

Երկու ցեղերի Լեզգիների մօտ ապրում են փոքր  
թուփ Թուրքեր (Թաթարներ) աւելի զէպի Նուխու  
դաւառի կողմը և զէպի Ալազանի ձորը, արեւե-  
լեան մասում, յետոյ առանձին գիւղերով մասմե-  
տական Վրացիներ, որոնք Խնդկոյի անուն են  
կրում։ Բոլոր այս ազգերը, բայց մասնաւոր լեզ-  
գիները, շատ հիւրասեր քաղաքակրթութիւն ունեն, չա-  
փազանց մաքուր լին սիրող են։ Նրանք մեծ մասը  
բարձրահասակ են և զեղեցիկ կազմուածք և զէպը  
աւելին։

Օգոստ. 3-ին

Ա. Արծրունի

### Նամակ խմբագրին

Մի քանի տարի սորանից առաջ Թիֆլիսը ու-  
ներ վից ծխական ուսումնարան, որ ուսուցչա-  
կան պաշտօն էին ստանում Ներսիսեան Գաբրիել  
Հոգաբարձութեան տնօրէնութեամբ մի քանի երի-  
տասարդներ, որոնք առաւել էին նպաստում մեր  
մասնակ սերունդի զարգացմանը, քան թէ սպասելի  
էր, աչքի առաջ ունենալով այն նեղ հրահանգու-  
թիւնը, որով պատուիրած էր նոյապ քործ կատա-  
րել։ Նրանք կազմում էին ժողովներ, որտեղ խոր-  
հորդակցում էին ընդհանուր և միաձև կարգապա-  
հութեան վրա, ցարկցանում էին մանկավարժա-  
կան խնդիրներ, և մինչև անգամ իրանց չըմանի  
մէջ մի քանի անհարթութիւններին առաջն առ-  
նելու համար կրեւնական յայտարարութիւններով  
զինում էին նոյն Հոգաբարձութեանը։ Սակայն  
նորանց այդ անձնանուէր պաշտօնատարութիւնը  
երկար չը տևեց... Այդ ծխականները դուրս գա-  
լով Հոգաբարձութեան իրաւասութեան ներքոյ լի-  
նելուց, ընկան եկեղեցեցի առաջ քաշանալիքի և  
եղեցիկաբանի իրաւունքի տակ։

Աւստի նոյանից չորսը ոչնչանալով մէկին էլ  
ունեց կարծիքով բարձր լինելով ծխականների  
